

# Կորոնավիրուսային Զիվանդություն (COVID-19)

## Վերջին թարմացումներ.

11.6.20. Թարմացված տեղեկատվություն ապաստարանում մեկուսացման և կարանտինի և կենդանիների վերահսկման վերաբերյալ:



## 1. Ի՞նչ է նոր կորոնավիրուսը:

Կորոնավիրուսները վիրուսների մեծ ընտանիք են: Նրանցից շատերը վարակում են կենդանիներին, բայց կենդանիների որոշ կորոնավիրուսներ կարող են զարգանալ (փոխվել) և վարակել մարդկանց, այնուհետև տարածվել անձից անձի: Ահա սա է կատարվել ընթացիկ նոր տիպի կորոնավիրուսի դեպքում: Կորոնավիրուսներից մարդկանց մոտ հիվանդությունները սովորաբար առաջացնում են մեղմ և միջին ծանրության հիվանդություն, ինչպես սովորական մրսածությունը: Որոշ կորոնավիրուսներ, ինչպիսիք են SARS կամ MERS վիրուսները, լուրջ վարակներ են առաջացնում, ինչպիսին է թոքաբորբը:

## 2. Որո՞նք են մարդկանց մոտ COVID-19-ի ընդհանուր ախտանիշները:

COVID-19-ի ախտանիշները կարող են ներառել հետևյալներից մեկը կամ մի քանիսը՝ ջերմություն, հազ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն, տենդ, հոգևածություն, մկանային կամ մարմնի ցավ, գլխացավ, կոկորդի ցավ, սրտխառնոց կամ փսխում, փորլուծություն, հարբուխ կամ համի ու հոտի զգացողության նոր կորուստ: Ախտանիշների այս ցանկը ամբողջական չէ: Ախտանիշների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [ph.lacounty.gov/covidcare](http://ph.lacounty.gov/covidcare):

## 3. Ինչպե՞ս է տարածվում COVID-19:

Ինչպես այլ շնչառական հիվանդությունները, մարդկային կորոնավիրուսները հիմնականում փոխանցվում են վարակված անձից մյուսներին հետևյալ կերպ.

- Կաթիլներ, որոնք առաջանում են հազալիս, փռշտալիս և խոսելիս
- Սերտ անձնական շփում, ինչպիսին է վարակված անձին ինամելը:
- COVID-19 կարող է նաև տարածվել դիպչելով մակերեսի կամ առարկայի, որի վրա առկա է վիրուս, ապա դիպչելով բերանին, քթին կամ աչքերին, բայց սա չի համարվում վիրուսի տարածման հիմնական եղանակը: Որոշ մարդիկ վարակվում են COVID-19-ով առանց որևէ ախտանիշ ունենալու, բայց նրանք կարող են փոխանցել վարակը

## Հիմնական Հաղորդագրություններ.

Չկա ապացույց, որ ընտանի կենդանիները կարող են COVID-19 տարածել մարդկանց վրա:

Այնուամենայնիվ, ընտանի կենդանիները կարող են այլ հիվանդություններ տարածել մարդկանց վրա, այսպիսով լվացեք ձեր ձեռքերը ընտանի կենդանիներին ձեռք տալուց առաջ և հետո:

Կենդանիների խնամքի և վերահսկողության անձնակազմը պետք է հետևի հիվանդ կենդանիների կամ հիվանդությանը ենթարկվածների հետ վարվելու ստանդարտ արձանագրություններին:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

Լոս Անջելես Ծրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Չանգահարեք 2-1-1 հեռախոսահամարով

<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ

<http://www.cdc.gov/coronavirus/novel-coronavirus-2019.html>

մյուսներին:

#### **4. Կարո՞ղ եմ արդյոք ընտանի կենդանիները հիվանդանալ COVID-19-ով և տարածել այն:**

Մինչ օրս ԱՄՆ-ում մի քանի հաղորդումներ են եղել այն մասին, որ կենդանիների COVID-19-ի թեստի արդյունքը դրական է եղել՝ հիմնականում COVID-19 ունեցող մարդկանց հետ սերտ շփումից հետո: Պարզվում է, որ որոշ դեպքերում վիրուսը կարող է անցնել մարդկանցից կենդանիներին: Այնուամենայնիվ, չեն հաղորդվել դեպքեր, երբ մարդիկ կամ ընտանի կենդանիների տերերը իրենց կենդանիներից են COVID-19-ով վարակվել: Այս պահին ոչ մի ապացույց չկա, որ ընտանի կենդանիները, այդ թվում՝ շներն ու կատուները, կարող են COVID-19-ը տարածել մարդկանց վրա:

#### **5. Ինչպե՞ս կարող եմ ինքս ինձ պաշտպանել աշխատավայրում COVID-19-ով վարակվելուց:**

COVID-19-ին բնորոշ ախտանիշներ ունեցող անձնակազմի անդամները պետք է տանը մնան և խոսեն իրենց բուժաշխատողի հետ թեստ հանձնելու վերաբերյալ: Այն մարդիկ, ում COVID-19-ի թեստի արդյունքը դրական է, կամ ում բուժաշխատողն ասել է, որ նրանք COVID-19-ով են վարակված, պետք է [մեկուսանան](#), իսկ նրանք, ովքեր սերտ շփման մեջ են լաբորատորիայով հաստատված COVID-19-ով վարակված անձի հետ, պետք է տանը մնան և [կարանտին](#) պահպանեն: Դեմքի ծածկոցներ պետք է կրել ամբողջ ապաստարանում, իսկ ֆիզիկական հեռավորությունը պետք է իրականացվի ապաստարանի բոլոր տարածքներում, որքան հնարավոր է:

Երբ ֆիզիկական հեռավորության պահպանումը հնարավոր չէ (օրինակ՝ անասնաբուժական գործողությունների ընթացքում), ապաստարանի անձնակազմը պետք է օգտագործի համապատասխան անձնական պաշտպանության միջոցներ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [Անասնաբուժական Գործունեության Անձնակազմի Ուղեցույց](#) :

#### **6. Ի՞նչ պետք է անեմ, եթե ստիպված եմ շփվել ընտանի կենդանու հետ, ով սերտ շփման մեջ է եղել շնչառական ախտանիշներ ունեցող մարդու հետ:**

Չնայած մորթուց հիվանդության փոխանցման վտանգը ցածր է թվում, ապաստարանի անձնակազմին խորհուրդ է տրվում կատարել հետևյալ նախազգուշական միջոցները.

- Կրել դիմակ, թիկնոց և ձեռնոցներ: Ուղեկցող կենդանիների պատմության վրա հիմնված առաջարկվող PPE-ն կարելի է գտնել [այստեղ](#):
- Լվացեք ձեռքերը օճառով և ջրով կենդանիների հետ յուրաքանչյուր փոխազդեցությունից առաջ և հետո:
- Թույլ մի տվեք, որ ընտանի կենդանիները լիզեն ձեր դեմքը նրանց հետ շփման ընթացքում, և խուսափեք ավելորդ փոխազդեցությունից, ինչպիսիք են շոյելը, փաթաթվելը, կերակրելը և կերակուրը կիսելը:

## 7. Ի՞նչ պետք է անեմ, եթե պետք է ընտանի կենդանուն հետ վերցնեմ COVID-19-ով վարակված բնակավայրից:

- Հնարավորության դեպքում խուսափեք տուն մտնելուց՝ մարդուց մարդ փոխանցումը կանխելու համար: Կենդանուն պետք է վերցնի աշխատակազմը՝ միևնույն ժամանակ պահպանելով տանն ապրող բնակիչներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն և սահմանափակելով շրջակա միջավայրի հետ շփումը: Թե՛ կենդանիների վերահսկման աշխատողը, և թե՛ կենդանուն հանձնող բնակիչը պետք է այս կարճ փոխազդեցության ընթացքում կրեն դեմքի համապատասխան ծածկոցներ: Այնպիսի իրեր, ինչպիսիք են ամանները, շնակապերը և խաղալիքները, չպետք է հեռացվեն տնից:
- Ձեռքերը լվացեք ընտանի կենդանու հետ առնչություն ունենալուց առաջ և հետո (օգտագործեք օճառ և ջուր կամ ձեռքի ախտահանող միջոց, որը պարունակում է առնվազն 60% ալկոհոլ): Վերադառնալով ապաստարան՝ ախտահանեք բեռնատարը, լվացեք ձեռքերը և փոխեք հագուստը:

**8.** Եթե ընտանի կենդանուն վերցնելը ներառում է COVID-19-ով վարակված ընտանիքի անդամների կամ շրջակա աղտոտված միջավայրի հետ շփում, խուրհուրդ է տրվում [PPE-ի](#) կիրառումն ու դրա ճիշտ կիրառման վերապատրաստումը: Կենդանիներին ապաստարան վերադարձնելուց հետո բոլոր PPE-ները և կոշիկները հեռացրեք և դեն նետեք, կամ ախտահանեք և լվացեք (եթե կիրառելի է):

## 9. Ի՞նչ պետք է անեմ, եթե ընտանի կենդանուն պահում են ապաստարանում:

- Հազվեք ձեռնոցներ և թիկնոցներ/կոմբինեզոններ, որոնք կարելի է լվանալ, և հատուկ կոշիկներ, երբ առնչվում եք ընտանի կենդանու հետ՝ ընդունելության համար:
- Ձեռնոցները հանելուց հետո յուրաքանչյուր կենդանու հետ առնչվելուց՝ լվացեք ձեռքերը:
- Այս կենդանիներին կամ ընտանի կենդանիներին այլևս խորհուրդ չի տրվում լվանալ կամ մաքրել տեղային ախտահանիչ միջոցներով:
- Ամփոջապես ախտահանեք մակերեսները ընդհանուր օգտագործման վայրերում, որտեղ շփում է եղել վարակված կենդանիների հետ:
- Ընտանի կենդանուն մեկուսացրեք համանման վարակման ենթարկված կենդանիների համար նախատեսված սենյակում՝ ընդհանուր բնակչությունից հեռու: Վարակված կենդանիները պետք է տարանջատվեն ըստ տեսակների (օրինակ՝ շներն ու կատուները առանձին տարածքներում պետք է լինեն):
- Ընտանի կենդանու սենյակի վրա ցուցանակ փակցրեք՝ նրա ինքնության, վարակված լինելու և “Չդիպչել”-ու անհրաժեշտության մասին:
- Կենդանուն հանեք դուրս՝ վերացման/վարժեցման համար նախատեսված տարածք, որը կարելի է ախտահանել, բայց թույլ մի տվեք ունենալ ուղղակի կապ այլ մարդկանց և կենդանիների հետ:
- Մանրակրկիտ վերահսկեք յուրաքանչյուր կենդանուն՝ հիվանդության նշանների հայտնաբերման համար, և անհապաղ զեկուցեք Հանրային Առողջապահության Վարչությանը, Անասնաբուժական Հանրային Առողջապահական Ծրագրին, եթե հիվանդության նշաններ եք նկատում:

## Կորոնավիրուսային Զիվանդություն (COVID-19)

- Նշանակեք սահմանափակ անձնակազմի անդամներ, որոնք մուտք ունեն այս սենյակ կերակրման, մաքրման և բժշկական խնամքի համար՝ սահմանափակելու վիրուսի տարածումը ապաստարանի տարբեր մասերում: Անձնակազմը, ով գտնվում է COVID-19-ի բարդությունների մեծ վտանգի տակ, պետք է խուսափի այդ կենդանիների հետ շփումից: Պահպանեք տեղեկամատյան անձնակազմի այն բոլոր անդամների մասին, ովքեր շփվել են կենդանու հետ՝ մասնագիտական առողջության վերահսկման համար:
- Հետևեք ապաստարանի արձանագրություններին՝ կենդանիների ապաստարանի և նրանց համար օգտագործվող տրանսպորտային միջոցների ստանդարտ ախտահանման համար: Նշված սենյակը մաքրել վերջում՝ ի համեմատ ապաստարանի ամբողջ բնակչությանը:
- Ավելացնել հաճախակի հպման ենթարկվող տարածքների ախտահանումը (բռնակներ, սեղաններ, շնակապեր, տարաներ, համակարգիչներ):
- Հնարավորինս շուտ ընտանի կենդանուն վերադարձրեք տիրոջը: Եթե վարակված ընտանի կենդանին պետք է որդեգրվի կամ խնամքի հանձնվի, ապա նրան 14 օր պահել ապաստարանում՝ վերջին հայտնի վարակից հետո: